

Քանի ընտանիք այս տարի կապահովվի բնակարանով



Տների բաշխումն արվում է հրապարակային ու վիճակահանությամբ

Երբ 1988թ. դեկտեմբերի 7—ի երկրաշարժի 20—րդ տարելիցին նվիրված միջոցառումների կազմակերպման պետական հանձնաժողով էր ստեղծվել, գումարվող նիստերում պարբերաբար քննարկվում էր երկրաշարժի հետեւանքով անօթեւան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման հայեցակարգը եւ պարբերաբար ընդգծվում էր, որ, չնայած աղետի գոտում իրականացված հսկայածավալ գործին, դեռ չլուծված շատ խնդիրներ կան: Ի՞նչ վիճակ է այսօր աղետի գոտում, վերականգնողական ի՞նչ աշխատանքներ են տարվում եւ որո՞նք են հեռանկարները: Երեկ այս եւ այլ հարցերի կառավարությունում անդրադարձավ քաղաքաշինության նախարար Վարդան Վարդանյանը: Համեմատության համար նշենք, որ, 2008թ. պատկերն այսպիսին էր. Լոռու եւ Շիրակի մարզպետարանների եւ պետական հանձնաժողովի միացյալ հանձնախմբերի ուսումնասիրությունների արդյունքներով, Լոռու եւ Շիրակի մարզերում, այդ տարվա մարտի 1—ի դրությամբ, անօթեւան էր 7665 ընտանիք: Դրանցից 4666—ը՝ ՀՀ Շիրակի մարզում (այդ թվում՝ Գյումրիում՝ 4018, մարզի 41 գյուղական համայնքներում՝ 648 ընտանիք): 1988—2008թթ. ընթացքում Շիրակի մարզի քաղաքային եւ գյուղական համայնքներում բնակարաններով ապահովվել են 19265 անօթեւան ընտանիքներ, այդ թվում՝ 17779—ը՝ Գյումրիում: Բացի այդ, բնակարանների գնման ծրագրով 2005—2007թթ. Գյումրիում բնակարան է ստացել 520 շահառու ընտանիք, մարզի գյուղական բնակավայրերում կառուցվել է 112 բնակելի տուն: Բնակարանային ապահովման ծրագրեր են իրականացվել նաեւ հասարակական կառույցների կողմից: Մասնավորապես, «Ուրբան» հիմնադրամի միջոցներով 2000—2004թթ. մարզում բնակարան է ձեռք բերել 4 838 ընտանիք: Իսկ Լոռու մարզում, 2008թ. մարտի 1—ի դրությամբ, հաշվառվել է 2999 անօթեւան ընտանիք, որից 114—ը՝ Վանաձորում, 923—ը՝ Սպիտակում, 59—ը՝ Ստեփանավանում: Մարզի 33 գյուղերում անօթեւան է 1903 ընտանիք: Լոռու մարզում 1988—2008 թթ. ընթացքում մարզում բնակարանով ապահովվել է 14601 անօթեւան ընտանիք, որից 11083 ընտանիք՝ Վանաձորում, Սպիտակում եւ Ստեփանավանում, 3518—ը՝ գյուղերում: Լոռիում 2005—2007թթ. բնակարանային գնման ծրագրով բնակարան է ստացել 179 ընտանիք, իսկ գյուղերում 432 ընտանիքի համար բնակելի տներ են կառուցվել: Իսկ այս տարի, ըստ Վ. Վարդանյանի, պատկերն այսպիսին է: 2010թ. նախատեսվում է աղետի գոտում բնակարանով ապահովել 1624 ընտանիքի, այդ թվում՝ Գյումրիում՝ 1056, Լոռու մարզի գյուղական բնակավայրերում՝ 306, Սպիտակում՝ 220, Ստեփանավանում՝ 42: Այդ բնակարանների բաշխումն իրականացնում է հանձնաժողովը, որը ղեկավարում է քաղաքաշինության նախարարությունը: «Գործունեության թափանցիկության եւ հրապարակայնության ապահովման համար հանձնաժողովում, բացի մասնագետներից, ընդգրկված են նաեւ ԶԼՄ—ների ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ»,—ասաց քաղաքաշինության նախարարը: «Իսկ այս մասնագետների շարքում ներառված է սեյսմակայունությունը գնահատող մասնագետ».

«ՀՀ»—ի հարցին ի պատասխան՝ նախարարը ասաց. «Ոչ, չկա» միաժամանակ սակայն հավելելով, թե շինարարության որակը վերահսկվում է: Հիշեցնենք, որ երկրի նախագահ Սերժ

Սարգսյանը մեկ անգամ արդեն շինարարության որակի հետ կապված բավականին խիստ դիտողություն արել է: «Դրանից հետո վիճակը բարելավվել է»,—ասաց նախարարը: Հանձնաժողովը կազմակերպում է արտագնա նիստեր եւ տեղում, շահառուի ներկայությամբ քննում է նրա գործը: Մինչ այժմ կայացել է 24 նիստ: Գյումրիում, օրինակ, իրազեկվել է 2000 շահառու, ներկայացված 1450 փաստաթղթային փաթեթների ուսումնասիրությունից հետո բնակարան ստացողների ցուցակում ընդգրկվել է 1356 ընտանիք, որից 1056—ը՝ Գյումրիում եւ 300—ը

Լոռու

մարզում:

Բնակարանների բաշխումը հրապարակային է արվում՝ վիճակահանությամբ՝ ըստ սենյակների թվի նույնական բնակարաններ ստացող ընտանիքների միջեւ: Ընդ որում՝ ընտանիքի անդամներից մեկը անձամբ ինքն է արկղից դուրս բերում իր ապագա բնակարանի համարը: Գյումրիի Մուշ—2 թաղամասում կառուցված 1056 բնակարանները բաշխելու համար մինչ այսօր անցկացվել է 6 վիճակահանություն, որին մասնակցել է 810 ընտանիք: Բաշխվել է 3 սենյականոց՝ 292, 2 սենյականոց՝ 306 եւ 1 սենյականոց՝ 212 բնակարան: Մնացած բնակարանների բաշխման վիճակահանությունը նախատեսվում է ավարտել մինչեւ հունիսի 25—ը: Գյումրիի Անի եւ Մուշ թաղամասերում, ընդհանուր առմամբ, նախատեսվում է կառուցել 59 շենք՝ 3030 բնակարանով: Դրանցից 22—ը՝ 1056 բնակարանով, արդեն այս ամսվա վերջին կհանձնվեն շահագործման, իսկ մնացած 37—ի շինարարությունը, ըստ բանախոսի, ընթանում է: 32 շենք կկառուցվի Մուշ, 5 շենք՝ Անի թաղամասերում՝ ընդամենը 1974 բնակարանով, 215 հազ. քմ ընդհանուր մակերեսով: Շիրակի մարզի գյուղական բնակավայրերում նախատեսվում է կառուցել 408 բնակելի տուն, Ախուրյան քաղաքում՝ 192—ը: Սպիտակում կառուցվում է նոր թաղամաս, արդեն պատրաստ են 2 եւ 3 սենյականոց 220 բնակելի տներ, որոնք շահագործման կհանձնվեն հուլիսի 15—ին: Այս տարվա ընթացքում կանցկացվեն արտաքին ինժեներական ցանցերը եւ կբարեկարգվի թաղամասը: Լոռու մարզի 8 գյուղերում (Շիրակամուտ, Մեծ Պարնի, Գեղասար, Արեւաշող, Հարթագյուղ, Լուսաղբյուր, Սարահարթ, Գոգարան) արդեն կառուցվել են 303 անհատական բնակելի տներ, շահագործման է հանձնվել 173—ը, 112—ը շահագործման կհանձնվի հուլիսի 15—ին: Ընդհանուր առմամբ, կկառուցվեն 600 բնակելի տներ Ջրաշեն, Լեռնավան, Կաթնաջուր, Ծաղկաբեր, Սարամեջ եւ Լեռնանցք գյուղերում, նաեւ ավարտին կհասցվեն անավարտ բնակելի տները: Այն գյուղերում, որտեղ շահառուների քանակը չի գերազանցել 10—ը, անօթեւան ընտանիքներին տրվել են բնակարանների գնման վկայագրեր: Լոռու եւ Շիրակի մարզերում տրամադրվել են 59 այդպիսի վկայագրեր: Լոռու մարզի 24 գյուղերում, Սպիտակում ու Շիրակի մարզի 11 գյուղերում իրականացվող բնակարանաշինության ծրագրի ընդհանուր արժեքն է մոտ 26 մլրդ դրամ, իսկ Գյումրիում՝ մոտ 39 մլրդ դրամ: Սպիտակում եւ Շիրակի ու Լոռու մարզերի գյուղերում նախատեսվում է կառուցել

2183

բնակելի

տներ:

Ի դեպ, ծրագրի ավարտը նախատեսված է 2012թ.:

Հ. Գ. Գնահատելով ընդհանրապես շինարարության ոլորտում այս տարվա շարժը նախորդ տարվա համեմատ՝ քաղաքաշինության նախարարը հայտնեց, թե այս տարի բնագավառում 12—15 տոկոս աճ կարձանագրվի:

«Հայաստանի Հանրապետություն»

15.06.2010թ.

**ԲՆԱԿԱՐԱՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒՄ
ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄԷ**



Ժամանակացույցին համապատասխան, շարունակվում է աղետի գոտու բնակարանաշինության ծրագրի իրականացումը: Տարվա ընթացքում նախատեսվում է բնակարանով ապահովել 1624 ընտանիքի: Այս մասին երեկվա մամուլի ասուլիսում հայտարարեց քաղաքաշինության նախարար ՎԱՐԳԱՆ ՎԱՐԳԱՆՅԱՆԸ:

Ամփոփելով մինչ օրս կատարված աշխատանքները եւ խոսելով առաջիկա ամեկիքների մասին, նախարարը նշեց, որ բնակարանների մեծ մասը կլինեն Գյումրիում, որտեղ նախատեսվում է բնակարանով ապահովել 1056 ընտանիքի: Եվս 306 ընտանիք բնակարան կստանա Լոռու մարզի գյուղական բնակավայրերում, 220-ը՝ Սպիտակում եւ 42-ը՝

Ստեփանավանում:

Բնակարանների բաշխումն իրականացնում է հանձնաժողովը, որը ղեկավարում է քաղաքաշինության նախարարը.

-Գործունեության թափանցիկության եւ հրապարակայնության ապահովման համար հանձնաժողովում, բացի մասնագետներից, ընդգրկված են նաեւ զանգվածային լրատվամիջոցների եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Հանձնաժողովը կազմակերպում է արտագնա նիստեր՝ տեղում շահառուների ներկայությամբ քննում նրանց գործերը:

Մինչ այժմ տեղի է ունեցել է 24 նիստ, որից 11-ը՝ Գյումրիում, 2-ը՝ Սպիտակում, 3-ը՝ Վանաձորում եւ 8-ը՝ գյուղական համայնքներում. «Գյումրիում իրազեկվել է 2 հազար շահառու: Ներկայացված 1450 փաստաթղթային փաթեթների ուսումնասիրությունից հետո բնակարան ստացողների ցանկում ընդգրկվել է 1356 ընտանիք»:

Այլ կերպ ասած, 644-ը տարբեր պատճառներով դուրս է մնացել: Ցանկում ընդգրկված շահառուների մեծ մասը Գյումրիի բնակիչներ են:

Տարբեր տիպի խոսակցություններից զերծ մնալու նպատակով բնակարանների բաշխումն իրականացվում է վիճակահանությամբ՝ ըստ սենյակների թվի նույն բնակարաններ ստացող ընտանիքների միջեւ.

-Ընդ որում, ընտանիքի ներկայացուցիչն անձամբ ինքն է արկղից հանում իր ապագա բնակարանի համարը:

Գյումրու Մուշ-2 թաղամասում կառուցված 1056 բնակարանների բաշխման նպատակով մինչեւ այժմ անցկացվել է 6 վիճակահանություն, որին մասնակցել է 810 ընտանիք: Բաշխվել է 3 սենյականոց 292, 2 սենյականոց՝ 306 եւ 1 սենյականոց՝ 212 բնակարան. «Մնացած բնակարանների բաշխման վիճակահանությունը նախատեսվում է ավարտել մինչեւ հունիսի 25-ը»:

Ընդհանուր հաշվով, ըստ քաղաքաշինության նախարարի, Գյումրիի Անի եւ Մուշ թաղամասերում նախատեսվում է կառուցել 59 շենք՝ 3030 բնակարանով: Դրանցից 22-ի աշխատանքներն արդեն հիմնականում ավարտված են: Այդ շենքերը շահագործման կհանձնվեն մինչեւ ամսվա վերջ: Մյուս 37 շենքի շինարարությունը դեռեւս ընթացքում է.

-32 շենք կկառուցվի Մուշ, 5 շենք՝ Անի թաղամասում՝ ընդամենը 1974 բնակարանով:

Ընդհանուր առմամբ կառուցվող բնակավայրերը կկազմի 215 հազար քառ. մետր: Շիրակի մարզի գյուղական բնակավայրերում նախատեսվում է շահագործման հանձնել 408 բնակարան: Եվս 192-ը՝ կլինի Ախուրյանում: Այս բնակարանների շինարարական աշխատանքները կսկսվեն հաջորդ տարվա ընթացքում:

Նոր թաղամաս կկառուցվի Սպիտակում.

-Արդեն պատրաստ է 2 եւ 3 սենյականոց 220 բնակելի տուն: Դրանք շահագործման կհանձնվեն հուլիսի 15-ին: Այս տարվա ընթացքում կանցկացվեն նաեւ արտաքին ինժեներական ցանցերը եւ կիրականացվի թաղամասի բարեկարգումը:

Համաձայն քաղաքաշինության նախարարի, անհատական 303 բնակելի տուն է կառուցվել Լոռու մարզի 8 գյուղում: Դրանցից արդեն շահագործման է հանձնվել 173-ը: Մնացածը՝ շահագործման կհանձնվի առաջիկա մեկ ամսվա ընթացքում. «Ընդհանուր առմամբ կկառուցվի 600 բնակելի տուն Ջրաշեն, Լեռնավան, Կաթնաջուր, Ծաղկաբեր, Սարամեջ եւ Լեռնանցք գյուղերում, նաեւ ավարտին կհասցվեն անավարտ բնակելի տները»:

Իհարկե, կիսակառույցների հետ կապված, նախարարի կարծիքով, խնդիրներն ավելի շատ են եւ աշխատանքները համեմատաբար բարդ են:

Բնակարաններ կառուցելուց գատ, շարունակվել է նաեւ վկայակագրերի տրամադրումը:

Սակայն այդ մոտեցումը կիրառվել է միայն այն համայնքների նկատմամբ, որտեղ շահառուների թիվը չի գերազանցել 10-ը: Ընդհանուր առմամբ Լոռու եւ Շիրակի մարզերում տրամադրվել է 59 բնակարանի գնման վկայագիր: Դրանցից 54-ով արդեն ձեռք է բերվել

բնակարան:

Աղետի գոտու բնակարանաշինության ծրագիրը, ըստ Վ.Վարդանյանի, նախատեսվում է ավարտել 2012 թվականին: Լոռու մարզի 24 գյուղերում, Սպիտակում եւ Շիրակի մարզի 11 գյուղերում իրականացվող բնակարանաշինության ծրագրի ընդհանուր արժեքը կկազմի շուրջ 26 մլրդ դրամ: Իսկ միայն Գյումրիում այն կհասնի 39 միլիարդի:

Թե ընդհանուր առմամբ բնակարանային ցուցակներում ընդգրկված քաղաքացիների որ մասը այս ծրագրի շրջանակներում բնակարան կստանա, դեռեւս հստակ չէ: Խնդիրն այն է, որ ուսումնասիրությունների արդյունքում ցուցակները ենթարկվում են փոփոխության:

-Մեր փորձը ցույց է տալիս, որ կան շահառուներ, որոնք ցուցակներից դուրս են մնացել եւ շահառու չեն ճանաչվել:

Անդրադառնալով այս տարի շինարարության ոլորտում առկա զարգացումներին, նախարարը նշեց, որ միտումները դրական են: Նախորդ տարվա համեմատ նկատվում է ներդրումների ավելացում: Այնպես որ.

-Այս տարի անցածի նկատմամբ բավական աճ կլինի: Ակնկալում ենք, որ շինարարությունը կավելանա 12-15 տոկոսով,- նշեց Վ.Վարդանյանը:

«Հայոց Աշխարհ»

15.06.2010թ.